ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՌԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ՍՊԻՏԱԿ
ԲՆԱԿԱՎԱՅՐԸ	ՀԱՐԹԱԳՅՈՒՂ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հարթագյուղ բնակավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքում:
Բնակավայրը ունի մեծ թվով այցելուներ բնակավայր, հիմնականում այցելուների հոսքը պայմանավորված է բնակավայրում առկա պատմամշակութային հուշարձաններով մասնավորապես՝ **Սբ. Նարեկ** եկեղեցի, **Սբ. Ճգնավոր** և **Սբ. Հովհաննես** մատուռներով, առկա են մաքուր ջրաղբյուրներ, Սպիտակ քաղաքից մինչև բնակավայր տանող ճանապարհը ասֆալտապատ է, ամբողջությամբ անցկացված է գիշերային լուսավորության ցանց: Հարթագյուղ բնակավայրում է գտնվում միջնադարյան <<Խարաբեք>> բնակատեղին 15-18-րդ դդ. ,Բագեր հնագույն բնակատեղիում հայտնաբերված մ.թ.ա 2-1 հազարամյակի ամրոցատեղի, գյուղի կենտրոնում պահպանված է կիսով չափ քանդված հազարաշեն շուրջ 200 տարեկան, Փամբակի լեռնաշղթայի բարձունքում գտնվում է Սբ. Հովհաննես մատուռ-ուխտատեղին թվագրված 10-12-րդ դար,գյուղի արևմտյան մասում Սբ.Ճգնավոր մատուռ-սրբավայր թվագարված 19-րդ դար, մատուռներ՝ Սբ.Նշան, Սբ.Խաչեր Սբ.Խնկանոցներ և Սբ.Կոնդ, Սբ.Նարեկ եկեղեցի վերակառուցված և վերաօծված 1902թվականին /կառուցված է Սբ.Ստեփանոս/1843թ./ եկեղեցու տեղում./: Ընդհանուր առմամբ գյուղում են գտնվում երեք գերեզմանոց /գերեզմանոցներից մեկը թվագրված 19-րդ դարի սկիզբ/, երկրաշարժի զոհերին նվիրված հուշարձան, 1941-1945թթ <<Հայրենական պատերազմի>>զոհերին նվիրված հուշարձան, 1920թվականի թուրքական կոտորածին նվիրված հուշարձան/կոտորածների ժամանակ սպանվել է 2100մարդ/, 2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազմում զոհվածների հիշատակը անմահացնող մեկ խաչքար, Ծիսական Խոյ 5000-ամյա և դամբարանադաշտ: Բնակավայրից սկիզբ է առնում «Փամբակ» գետը և հին գյուղ կոչվող բնակատեղիով է անցնում <<Փամբակի>> Արթա վտակը:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Բնակավայրը տեղակայված է Սպիտակ քաղաքից 25 կմ դեպի հյուսիս-արևմուտք՝ Փամբակի հովտի արևմտյան հատվածում Փամբակ լեռնաշղթայի ստորոտին: Մարզկենտրոն Վանաձոր քաղաքից հեռու է 45 կմ դեպի արևմուտք, մայրաքաղաք Երևանից հեռավորությունը 120 կմ է: Ծովի մակարդակից բարձր է 1711-1729 մ: Բնակավայրի կլիման վերջին տարիներին խիստ փոփոխվել է: Նախկին ձյունառատ ձմռան փոխարեն ներկայումս շատ քիչ ձյուն է տեղում, գարունը ցուրտ է, ամառը՝ զով, իսկ աշունը տաք և անձրևային:

3.ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (^{0}C)	-20
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին(^{0}C)	+30
Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, իսկ ամռանը զով: Հաճախակի են չոր երաշտի տարիները, որից շատ են տուժում հողագործները:	

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Սպիտակ
2. Բնակավայրի հեռավորությունը՝	
2.1) համայնքի կենտրոնից (կմ)	25
2.2) մայրաքաղաքից (կմ)	120
2.3) մարզկենտրոնից (կմ)	45
2.4) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	2
2.5) նախկին շրջկենտրոնից (կմ)	25
2.6) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	3
2.6) մոտակա երկաթուղային կայարանից (կմ)	3
4. Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1820
5. Բնակավայրի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	23.59 / 2359,22
6. Սահմանակից համայնքների և/կամ բնակավայրերի անվանումները	Մեծ Պարնի, Լուսաղբյուր, Խնկոյան, Ծաղկաբեր, Բասեն
7. Բնակավայրի վարչական ղեկավարի հեռախոսահամարը	094647773
8. Բնակավայրում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ), քանակը	այո. 1
9.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	այո
10. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	ոչ

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2025թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	1167
2. Գրանցված ծնունդների քանակը	5
2.Մահացության դեպքերի քանակը	4

3.Ամուսնությունների քանակը	6
4. Ամուսնալուծությունների քանակը	5
5. Տնային տնտեսությունների թիվը	279
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	55
7. Կենսաթոշակառուների քանակը	172
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	25

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Գրադարանների քանակը	1
2. Արվեստի դպրոցների քանակը	0
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	0
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	0

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2025թ.
1. Բնակավայրի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	140190
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	0
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	267

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2025թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	1934.71
2. Բնակավայրերի հողեր (հա)	140.19
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	19.21
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտներ	3.61

5. Հատուկ նշանակության	3.02
6. Հատուկ պահպանվող տարածքների	0
7. Անտառային	252.07
8. Ջրային	6.41
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	543
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	511
11. Խոզերի գլուխաքանակը	75
12. Գյուղատնտեսական տեխնիկա	11
12.1 տրակտորներ (քանակը)	6
12.2 կոմբայններ (քանակը)	1
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	0

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	Այո
2. Բնակավայրի գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	Այո
3. Բնակավայրի աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	Այո
4. Բնակավայրում գերեզմանատան առկայությունը (այո, ոչ)	Այո
5. Ներբնակավայրային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	15
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	0
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	0
6.2 Էքսկավատորների քանակը	1
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	3
6.4 Գրեյդերների քանակը	0
6.5 Աղբատար մեքենաների քանակը	0
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	0
7. Բնակավայրի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	0
8. Բնակավայրի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	ոչ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ
10. Ներբնակավայրային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Բնակավայրում համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	4 1
2. Բնակավայրի բնակիչ ավագանու անդամների թվաքանակը	0

11. ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	**Ակնկալվող լուծումը և լուծման ժամկետները**
Ներհամայնքային ճանապարհների Ասֆալտապատում / տուֆապատում/	2025-2026 թթ
Բնակավայրում խմելու ջրի ցանցի կառուցում	2025-2027 թթ
Բնակավայրում ոռոգման ջրերի ցանցերի կառուցում	2028թ
Լուսավորություն համակարգի կառուցում	2027-2028թ
Համայնքային զբոսայգու և խախահրապարակի կառուցում	-2030թթ